18768

371·2
S-30

2010

FB2001

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թիֆլիսի Թեմական Խորհրդի
1909—1910 թ. գործունեության

371.2
S-30

371.2
S-30
8412
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
370
Զ344-Տե

Տեղեկագիր Թիֆլիսի Թեմական Խորհրդի 1909—1910 թ. գործունէութեան

1908 թ. հոկտեմբերի 10-ին Առաջնորդարանում կայացած Թիֆլիսի թեմի պատգամաւորական ժողովը կարեւոր համարեց հիմնել Թեմական դպրոցական խորհուրդ՝ թեմի դպրոցական գործը ղեկավարելու Սրբազան Առաջնորդի հետ միասին։ Նոյն պատգամաւորական ժողովի որոշմամբ՝ Թեմական խորհուրդը պէտք է բաղկացած լինէր եօթն անձերից և թեմի Սրբազան Առաջնորդից, որ ի պաշտօնէ պէտք է նախագահէր խորհրդի նիստերին։ Այդ եօթն անդամներից չորսին ընտրեց Թեմական պատգամաւորական ժողովը. իսկ մնացեալ երեքի համար որոշեց, որ մէկն ընտրուի թեմի ծխական դպրոցների բոլոր ուսուցիչներից, երկրորդը՝ թեմի ծխ. դպրոցների բոլոր հոգաբարձուներից, իսկ երրորդը՝ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնից։

Անհնարին լինելով թեմի բոլոր ուսուցիչներին և հոգաբարձուներին Թիֆլիս հրաւիրել՝ խորհրդի երկու անդամ ընտրելու համար, ընտրութիւնը կայացաւ գրաւոր ձայնտուութեամբ և այդ պատճառով բաւական ուշացաւ։ Թեմական խորհրդի առաջին նիստը կարելի եղաւ կայացնել միայն 1909 թ. փետրուարի 20-ին՝ բոլոր անդամների մասնակցութեամբ. խորհրդի կազմը հետեւեալն էր. նախագահ՝ թեմի Սրբազան Առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս. անդամներ 1) Բալադեան Սամուէլ, 2) Յարութիւնեան Սամսոն, 3) Յարութիւնեան Իսահակ և 4) Տէր-Միրաքեան Յովհաննէս—թեմական պատգամաւորական ժողովից ընտրուած. (և անձնափոխանորդներ պ. պ. Աւետեան, Մալխասեան և Ռաշմաճեան)։ 5) Աբովեան Սարգիս —թեմի ծխական դպրոցների բոլոր ուսուցիչներից ընտրուած—6) Ղազարեան Ալէքսանդր—թեմի ծխական բոլոր հոգաբարձուներից ընտրուած և 7) Կաճկաճեան Նիկողայոս—Ներկայացուցիչ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան։

15819

Թեմական դպրոցական խորհրդի կազմը պատրաստ էր, սակայն ա-նորոշ էին նրա գործունէութեան սահմանները, որովհետև ոչ մի կանոնադրութիւն կամ հրահանգ չկար դեռ հոգևոր բարձրագոյն իշխանութեան կողմից։ Այս հանգամանքն ի նկատի ունենալով՝ թեմական խորհուրդը հէնց առաջին նիստում զբաղուեց այդ խնդրով և իր եզրակացութիւնը ձևակերպեց հետևեալ կերպով. «Թեմի դպրոցական բոլոր գործերը, որ մինչև այժմ վարում էր Թեմական Առաջնորդը, այսուհետև պէտք է ղեկավարէ Թեմական խորհուրդը՝ նախագահութեամբ Թեմի Սրբազան Առաջնորդի։ Ծխական եկ. դպրոցների հոգաբարձուներին կհաստատէ Թեմական Առաջնորդը, սակայն հոգաբարձուները բոլոր դպրոցական գործերի համար պէտք է դիմեն Թեմական խորհրդին»*)։

Վերոյիշեալ սահմաններում տեղի ունեցաւ այնուհետև Թեմական խորհրդի գործունէութիւնը մինչև Նորին Վեհափառութիւն Մատթէոս Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի էջմիածին ժամանելը. օգոստոսին ստացուեց Կաթողիկոսական Տեղակալի՝ Նորին Սրբութեան հրամանով տուած «Ժամանակաւոր կանոնները», որտեղ մի քանի կէտերով որոշուած էր Թեմական խորհուրդների իրաւունքներն ու պարտականութիւնները։

Այնուհետև Թեմական խորհրդի առաջին գործն եղաւ մշակել կանոններ Թեմական տեսչի ապագայ գործունէութեան համար։ Սակայն երբ Թեմական երկու տեսուչների ընտրութեան խնդիրն արծարծուեց՝ Թեմական խորհուրդը կանգ առաւ նիւթական խնդրի առաջ. Թեմական պատգամաւորական ժողովը ոչ մի հաստատուն եկամուտի աղբիւր չէր որոշել՝ խորհրդի ծախքերը և Թեմական տեսուչների ռոճիկները հայթայթելու համար, բացի Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան խոստացած տարեկան 500 րուբլուց։ Այս խնդիրը լուծելու համար անհնարին լինելով Թեմի պատգամաւորական ժողով գումարելը, խորհուրդը որոշեց գոնէ Թիֆլիսի ծխական դպրոցների բոլոր հոգաբարձուներին ժողովի հրաւիրել և նրանց հետ խորհրդակցել։

*) Տես. Թեմ. խորհրդի Արձանագրութիւն № 1։

1909 թ. մարտի 16-ին Առաջնորդարանում կայացած Թիֆլիսի եկ. ծխ. դպրոցների հոգաբարձուների ժողովը հետևեալ եզրակացութեանն եկաւ ա. «Առ այժմ բաւականանալ մէկ Թեմական տեսչով, քանի որ երկուսն ունենալու համար նիւթական միջոցներ չկան. բ. Թեմի այն բոլոր ծխական դպրոցները, որոնց տարեկան բիւջէն 500 րուբլուց պակաս չէ, տարեկան բիւջէի 3% պարտաւոր են վճարել Թեմական խորհրդին. գ. միջոց ունեցող այն եկեղեցիները, որոնք ծխական դպրոցներ չունեն, նպաստ պէտք է տան Թեմ. խորհրդին*»։

Թեմական խորհուրդը վերոյիշեալ որոշման համաձայն՝ շրջաբերական կարգադրութեամբ պարտաւորեցրեց Թեմի այն բոլոր ծխական դպրոցների հոգաբարձութիւններին, որոնց տարեկան բիւջէն 500 րուբլուց պակաս չէ, խորհրդին ուղարկել իրենց տարեկան բիւջէի 3% (որ մօտաւոր հաշուով պէտք է 4000 րուբլի լինէր)։ Սակայն չնայելով մէկ և կէս տարուայ ընթացքում այդ շրջաբերական գրութեան երկրորդ և երրորդ անգամ կրկնուելուն, ցայժմ միայն դրամական հաշուի մէջ յիշուած դպրոցները կատարեցին իրենց պարտքը։

Խորհուրդը տեսնելով ծխ. հոգաբարձութիւնների այս անտարբեր վերաբերմունքը՝ ստիպուած եղաւ այնուհետև չհաստատել ոչ մի դպրոցական նախահաշիւ, եթէ նրա մէջ նշանակուած չէր լինում Թեմական խորհրդին հասանելիք 3%. սակայն այս էլ չօգնեց և նախահաշուի մէջ նշանակուած տուրքն էլ չվճարեցին՝ ոմանք առարկելով թէ չեն կարողանում նոյն իսկ ուսուցիչների ռոճիկները վճարել։ Այսպիսով գոնէ մի Թեմական տեսչի տարեկան 3000 րուբլու մի երրորդն էլ չհաւաքուեց, որպէս զի խորհուրդը— մնացեալը յետոյ ստանալու յուսով—Թեմական տեսուչ ընտրէր. հետևանքն այն եղաւ, որ մեր դպրոցները մինչև այժմ մնացել են առանց անմիջական վերահսկողութեան, որ շատ վնասակար ազդեցութիւն ունի դպրոցական գործի կանոնաւորութեան և զարգացման նկատմամբ։

*) Տես. Արձանագրութիւն 1909 թ. մարտի 16-ի ժողովի։

Խորհուրդը հնարաւորութիւն ունեցաւ միմիայն այն դէպքերում, երբ տարաձայնութիւնները սուր կերպարանք էին ստանում, գաւառներն ուղարկել իր անդամներին՝ դպրոցական գործերը քննելու։ այսպիսով անմիջական քննութեան առնուեցան Ախալցխայի ու Ախալքալաքի (պ. պ. Աբովեան և Յարութիւնեան Իս.) Գանձակի, (պ. պ. Աբովեան և Բալաղեան) Գօրուայ (պ. պ. Ղազազեան և Տէր-Միրաքեան) դպրոցական գործերը։ Իսկ Թիֆլիսի ծխ. դպրոցների վերահսկողութիւնը յանձնուեց խորհրդի երեք անդամներին (պ. պ. Աբովեան, Յարութիւնեան Իս. և Տէր-Միրաքեան), որոնք տարուայ ընթացքում այցելելով այդ դպրոցները՝ տեղեկագրեր էին ներկայացնում խորհրդի նիստերին։

Դեմ. խորհուրդը տեսնելով, որ մեր դպրոցներում պաշտօն վարող ուսուցիչներից ոչ մի ցենդ չեն պահանջում ծխ. հոգաբարձութիւնները և ամեն ցանկացող ուսուցչի պաշտօն է վարում, որոշեց կարգի բերել այդ խնդիրը և կազմեց թեմում ուսուցչութիւն անելու իրաւունք ունեցողների ցանկը՝ իբրև սկզբունք ընդունելով, որ ծխական դպրոցներում պաշտօնավարող դասատուները պէտք է ունենան միջնակարգ դպրոցների աւարտման վկայական՝ բացի արհեստ աւանդողներից։ Սակայն աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ներկայումս չունինք բաւականաչափ ուսուցիչներ միջնակարգ դպրոցների աւարտման վկայականներով, որոշուեց ժամանակաւորապէս թոյլ տալ պաշտօն վարել և այն ուսուցիչներին, որոնք թէև միջնակարգ դպրոց չեն աւարտել, սակայն երկար տարիներ ուսուցչութիւն են արել մեր դպրոցներում։

Խորհուրդը ելնելով համարելով դպրոցական գործի համար՝ յաճախակի ուսուցիչներ ու ամբողջ ուսուցչական խմբեր արձակելու հանգամանքը՝ կարգադրեց, որ հոգաբարձութիւններն ուսուցչական խմբեր կամ ուսուցիչ արձակելու որոշումն կայացնելու դէպքում, նախ քան այդ որոշման իրագործելը՝ պէտք է նախապէս պատճառաբանուած բացատրութիւն ուղարկեն խորհրդին և վերջինիս որոշման համաձայն վարուեն։

Խորհուրդը մշակեց մանրամասն ցանկ այն հարցերի, որոնց պատասխանները պէտք է գրեն ծխական դպրոցների աւագ ուսուցիչները իրենց

կիսամեայ և տարեկան տեղեկագրերի մէջ և ուղարկեն խորհրդին. այդ ցանկերը տպագրուեցան և ուղարկուեցան բոլոր դպրոցներին։ Ստացուած կիսամեայ տեղեկագրերից մշակուած է մի ընդհանուր տեղեկագիր Թիֆլիսի թեմի բոլոր ծխական դպրոցների 1909—1910 թ. առաջին կիսամեակի ուսումնական և տնտեսական դրութեան մասին։

Ծխական դպրոցների համար ընդհանուր և պաշտօնապէս ճանաչուած ծրագրի բացակայութիւնն ի նկատի ունենալով՝ խորհուրդը դիմեց Նորին Վեհափառութեանը և խնդրեց գոյութիւն ունեցող ծրագիրներից մէկը պաշտօնապէս գործադրելու հրահանգ տալ։ 1910 թ. ամառը ստացուեց Նորին Վեհափառութեան ժամանակաւորապէս հաստատած ծրագիրը և ուղարկուեց բոլոր դպրոցներին, որ անհրաժեշտ կերպով գործադրեն և դպրոցական տարուայ վերջը ուսուցիչներն ուղարկեն իրենց դիտողութիւնները գործադրուած ծրագրի մասին։

Խորհուրդը կարգադրութիւն արեց դպրոցական քննութիւնների, ուսումնական տարուայ վերջանալու ժամանակի և ամառուայ ընթացքում շուտով ուսուցչական խմբեր կազմելու վերաբերմամբ։ Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ մշակեց ծխական դպրոցների համար նորմալ կանոնադրութեան նախագիծ և զբաղուեց ծխական կանոնադրութեան վերամշակման գործով։ (Այս երկու հարցերը մշակելիս մասնակցել են նաև Թիֆլիսի հասարակութիւնից ձեռնհաս անձինք)։

Թեմական խորհրդի գործունէութիւնն այս առաջին շրջանում չէր կարող խոչընդոտների չհանդիպել, քանի որ չկար որոշ կանոնադրութիւն և անորոշ էր դպրոցական վարչութիւնների յարաբերութեանց խնդիրը՝ թէ միմեանց և թէ խորհրդի նկատմամբ։

Այդ էր պատճառն ահա, որ խորհուրդն իր աշխատանքի և ժամանակի մեծագոյն մասը գործ է դրել այդ յարաբերութեանց անվերջ թիւրիմացութիւնները պարզելու և այս կամ այն դպրոցում ծագած ներքին դժտութիւնները քննելու խնդիրներով. հոգաբարձուների և ուսուցչական խմբերի տարաձայնութիւնները, աւագ ուսուցչի և ուսուցիչների մէջ տեղի ունեցած ընդհարումները, հոգաբարձական և մանկավարժական

խորհուրդների վէճերը՝ իրենց իրաւունքների սահմանները որոշելու նը-կատմամբ և այն գրագրութեան ընդարձակ ասպարէզ էին և խլում էին խորհրդի նիստերի մեծագոյն ժամանակը։ Երբ գրագրութեամբ խնդիրները չէին պարզւում և յարաբերութիւնների լարումը սպառնում էր խանգարել դպրոցական խաղաղ գործը՝ խորհուրդը իւր անդամներին էր ուղարկում տեղն ու տեղը գործը հանգամանօրէն քննելու և վերջ-նական որոշումն կայացնելու։

Մեր դպրոցների մեծ մասի անապահովնիւթական դրութիւնը պակաս խոչընդոտ չէ հանդիսանում. նոյն իսկ Թիֆլիսի նման հայաշատ կենդրո-նում ծխական դպրոցներն աղքատ վիճակի մէջ են գտնւում և լրիւ բա-ժանմունքներ չեն կարողանում պահել. երկրորդ կամ երրորդ բաժան-մունքներից երեխաները ստիպուած են լինում դուրս գալ և աւարտած համարել իրենց ուսումը՝ առանց ծրագրի ամբողջացման։ Խորհուրդը եր-կար զբաղուել է այս չարիքի առաջն առնելու նպատակով՝ հրաւիրել է ծխ. հոգաբարձուներին, միջոցներ է առաջարկել, որ գոնէ իրար մօտիկ դպրոցները միմեանց մէջ կապ հաստատեն, մէկ դպրոցի բաժանմունք-ների թերին միւսը լրացնէ. օրինակ եթէ երկու մօտիկ դպրոցներ մի-միայն երկ-երկու բաժանմունք պահելու հնարաւորութիւն ունեն՝ մէկը թող պահէ առաջին և երկրորդ բաժանմունքները, իսկ միւսը՝ երրորդ և չորրորդ բաժանմունքները, որպէս զի առաջինի երկու բաժանմունքն ա-ւարտողները շարունակեն միւսի երրորդ և չորրորդում և գոնէ չորսա-մեայ դասընթացն աւարտելուց յետոյ թողնեն դպրոցը—սակայն տարա-բաղդաբար խորհրդի աշխատանքն ապարդիւն անցաւ և հոգաբարձու-թիւնների մէջ համաձայնութիւն չկայացաւ։

Խորհուրդը միջոց չունէր ստիպելու իրենց տարեկան բիւջէի 3% չուղարկող հոգաբարձուներին՝ իրենց պարտքը կատարել, երբ դրանք գրում էին՝ թէ ուսուցիչների ռոճիկները չեն կարողանում վճարել կամ թէ ծխական ժողովի որոշմամբ իրենց տարեկան բիւջէի ոչ թէ 3%, այլ հազիւ 1% էին մացնում նախահաշուի մէջ՝ իբրև տուրք թե-մական խորհրդին. եղել են նոյնիսկ դէպքեր, որ գիւղական հոգաբար-

ձութիւնները խորհրդից են գրամ խնդրել՝ իրենց դպրոցի ծախքերը ծած-կելու համար։

Ահա այսպիսի հանգամանքներում է գործել թեմական առաջին դը-պրոցականխորուրդը։

Թեմական խորհուրդը 1909 թ. փետրուարի 20-ից մինչև 1910 թ. հոկտեմբերի 8-ը ունեցել է 59 նիստ.

ՆԵՐԿԱՅ ԵՆ ԵՂԵԼ

1) Թեմի Սրբազան Առաջնորդ և նախագահ թեմական խորհրդի՝ Գա-րեգին Արքեպիսկոպոս 48 անգամ (Սրբազան Առաջնորդի Թիֆլիսից բա-ցակայ լինելու դէպքում՝ խորհրդին նախագահել է Նորին Սրբազնութիւն Եփրեմ եպիսկոպոսը։

2) Աբովեան Ս.	49	անգամ
3) Բալաղեան Ս.	43	»
4) Կաճկաճեան Ն	36	»
5) Ղազարեան Ա.	47	»
6) Յարութիւնեան Իս.	58	»
7) Յարութիւնեան Ս. (մինչև 1910 թ. մայիսի 17)	4	»
8) Տէր-Միրաքեան Յ.	55	»

Թիֆլիսի Թեմական խորհրդի դրամական հաշիւն 1908 Թ նոյեմբերից մինչեւ 1910 Թ. հոկտեմբերի մէկն։

ՄՈՒՏՔ.

1908—1909.

	Ռ.	Կ.
1. Ներսիսեան դպրոցից	200	—
2. Գայիանեան օրիորդաց դպրոցից	50	—
3. Ս. Սարգիս եկեղեցու ծխական դպրոցի հոգաբարձութիւնից	20	—
4. Բանանց գիւղի ուսումնարանի հոգաբարձութիւնից . .	10	—
1910 Թւականին		
5. Գորուայ Ախալքալաքի դպրոցի հոգաբարձութիւնից .	19	50
6. Զրկինեանց եկեղեցւոյ դպրոցի հոգաբարձութիւնից .	30	—
7. Կոնսիստորիայի միջոցով Ախալցխայի դպրոցների հոգաբարձութիւնից	300	—
8. Հավլաբարի Ս. Կարապետ եկեղեցու ուսումնարանի հոգաբարձութիւնից	21	75
Գումարն . .	651	25

ԵԼՔ

1908—1910 Թ. հոկտ. մէկն

	Ռ.	Կ.
Խորհրդի համար բլանկներ տպելու, Թիֆլիսի Թեմում ուսուցչութիւն անելու իրաւունք ունեցող ուսուցչաց ցանկը տպագրելու, ուսումնարանական տեղեկագրերի և խորհրդի յայտարարութիւնները տեղական լրագրներում տպել տալու համար ծախսուած է	115	48
Խորհրդի գրագրութեանց համար թղթի և հեռագիրների ծախս է եղել	15	50
Խորհրդի անդամներից երկ-երկու անձ Ախալքալաք, Գանձակ և Գորի գնալու համար ճանապարհածախս է վճարուած	129	14
[illegible] գրագրի 18 ամսուայ ռոճիկը	180	—
[illegible] թղթատարի մի տարուայ ռոճիկը	24	—
	464	12

Հ.Ս.Խ.Հ. ... С.С.Р.А. ... 7/XI- 1922 МОСКВА, Мясники ... ՑՏՍԱՆԻՆՅԱՆԻ ...

2013
<< Ազգային գրադարան >>
NL0052591